

Փամբակ-Դարանակի աշակերտները մասնակցեցին օնլայն դասընթացներին

Մ. թ. մայիսի 4-ին տեխնիկական խնդիրներ հաղթահարելուց հետո առաջին անգամ օնլայն դասընթացին մասնակցեցին Գեղարքունիքի մարզի Փամբակ-Դարանակի միջնակարգ դպրոցի 7-րդ և 8-րդ դասարանների աշակերտները:

Օնլայն դասընթացի ժամանակ աշակերտներն ուսուցիչների օգնությամբ քննարկեցին իրենց կատարած առաջադրանքները, հարց ու պատասխանների միջոցով ծանոթացան նաև այն առաջադրանքների լուծումներին, որոնք դժվարացել էին կատարել հատկացված ժամանակահատվածում:

Լրացուցիչ տեղեկացնենք, որ ինտերնետ կապի բացակայության ժամանակ աշակերտների կատարած առաջադրանքները սկանավորվում և ուսուցիչներին էր ուղարկվում դպրոցի տնօրեն Ա. Բարսեղյանի անմիջական աջակցությամբ՝ Վարդենիս քաղաքից: Հուսանք, որ ինտերնետ կապը կլինի անխափան և յուրաքանչյուր աշակերտ կկարողանա ինքնուրույն իր կատարած աշխատանքը ուղարկել և ստանալ պատասխան մասնագետ-ուսուցչից:

Մ. թ. մայիսի 12-ին հերթական օնլայն դասընթացը 9-րդ դասարանցիների համար անցկացրեց ֆիզմաթ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Վալերի Հայրիյանը, ում աջակցեց Դպրաբակի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Հրաչիկ Սաֆարյանը:

Արդեն սովորական դարձած օնլայն դասընթացի ժամանակ Հայրիյանը աշակերտների հետ քննարկեց իրենց կողմից կատարված աշխատանքները, տվեց նրանց լուծման այլ ձևեր: Հաջորդ առաջադրանքների կատարման համար կատարեց պարզաբանումներ և տվեց ցուցումներ:

Լրացուցիչ տեղեկացնենք, որ ինչպես մյուս գործընկեր դպրոցներում /Գեղարքունիքի մարզի գ. Փամբակ-Դարանակ, Սյունիքի մարզի գ. Սառնակունք/, այնպես էլ Դպրաբակի դպրոցում մասամբ լուծված են ինտերնետ կապի հարցերը: Տեսադասերի արդյունավետությունը բարձրացնելու համար ցանկալի է դպրոցներին ապահովել պրոյեկտորներով: